



“.....”..... 201

..... / .....

**ՀՐԱՄԱՆ N 182-Ա**

19 հունիսի 2018թ.

ք. Երևան

**ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածները, ՀՀ կառավարության 2018 թվականի «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանելու մասին» N 272-Ն որոշման պահանջերը և ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 697-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձ նշանակել մամուլի քարտուղար - հասարակայնության հետ կապերի ստորաբաժանման ղեկավար Նունե Այլանջյանին:

2. Տեղեկատվության և հեռահաղորդակցության վարչության պետ Վ.Վարդանյանին՝ մեկօրյա ժամկետում հաղորդման հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձի տվյալները և սույն հրամանը տեղադրել ՀՀ սփյուռքի նախարարության պաշտոնական կայքէջում:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՄԻՒԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

